



ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. — ՊԱՏՄԱԿԱՆ
ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

1843-1897 ՀԱՏՈՐ ԵՒ ԳԵԿՏԵՄԲԵՐ

ՍՈՒՐԱՏԱՅ

Հին Թուրքսուտիքեան Հրատարակութիւնն
ԵՒ Մ. ԽՈՐԵՆԱՅԻ



ԵՐԶԱՊԷՍ հրատարակուեցաւ յէջ միածին Սոկրատայ եկեղ. պատմութեան հին և ընդարձակ թարգմանութիւնն, հանդերձ ս. Սեդրեսարոսի Պատմութեամբ, որուն ի վազուց անհամբեր կը սպասէին շատեր: Յոյժ երախտապարտ ենք Մեքսիկայ վ. Տէր-Մովսիսեանի, որ երկար և տաժանելի աշխատութեամբ փութաց ծանօթացնել ուսումնատենչ աշխարհին՝ մեր վաստակատէր նախնեաց անդուլ քրտամբ կատարուած այդ օգտաշատ

և մեծ գործը: Սակայն ո՞վ եղաւ յորդոր և շարժառիթ հրատարակչին դէպ ի այս ձեռնարկութիւնս. դարձեալ Մովսէս Խորենացի: Յիրաւի թէ յանիրաւի թող կոչեն զնա նորեկը՝ «ցնգած ձերունի», թող մղեն նորա պատմագրութիւնը Եզէ՛ մինչեւ թա՛ դարու սահմանները, թող ճգնին սնչացնել նորա հաւատարմութիւնը. բայց նա իւր ծանրակշիւ հեղինակութեամբն՝ զեռ շատ զրիչներ պիտի շարժէ և շատ զրուածներ տայ արտադրել, իր կորուսած սահմանները՝ վերստին ձեռք բերելու համար: Ահա այս առթիւ դարձեալ Խորենացին կու գայ ի հանդէս՝ իբրեւ յաղթող, և մեզ կու տայ խօսել:

Այս 834 էջերէ բաղկացած ստուար գործն, որու 101 էրեսները զրաւած է հրատարակչին հմտալից ներածութիւնն՝ Մեծ և Փոքր Սոկրատայ թարգմանութեանց և Խորե-